

Երկու օր վերջ ո՛չ միայն անգլիացի գրողը այլ նաեւ ամբողջ քաղաքը գիտեր, որ հայ գրող մը ժամանած է:

Ու ծանօթացուց զիս անգլիացի գրողին հետ:

Անգլիացին, իր սիրուհիին հետ ամէն օր ճամբորդութեան մէջ էր, գինովութեան մէջ, ճաշկերոյթի մէջ, նաւակի մէջ, հաճոյքի եւ գեղիսութեան մէջ: Միշտ աչքերուս կը նայէր ժպտելով ու կը բարեւեր: Օր մը պատուհանիս առջեւ եկաւ, ներս հրաւիրեցի զինքը: Քիչ մը խմած էր ու ներսէն դուրսէն սկսաւ խօսիլ.

-Յրատարակչական ընկերութեան մը հետ պայմանագրուած եմ: Երկու ամիսը անգամ մը վէպ մը կը գրեմ ու կը յանձնեմ: Տարին հինգ վէպ: Երկու ամիս արձակուրդ: Ամէնն ալ շուտով կը սպառին: Տարին 160,000 ֆրանք միայն հրատարակիչէս կը ստանամ: Գրելու մեծ դիւրութիւն չունիմ: Աւելի, քան կրկինը կրնայի շահիլ, եթէ այդ դիւրութիւնը ունենայի:

-Ի՞նչ նիւթերու մասին կը գրեք:

-Ես ոստիկանական, ոճրագործական, աւազակային, խորհրդաւոր վէպեր կը գրեմ: Ինչպէս ըսի, երեք տարի է, որ սկսած եմ այս գործը: Յիմար եմ եղեր անկէ առաջ: Առաջին վէպիս նիւթն էր աղջիկ մը, որ սիրահարուած է գաղտնի ոստիկանի մը: Երկրորդ վէպիս նիւթն էր ուրիշ աղջիկ մը, որ սիրահարուած է աւազակապետի մը: Երրորդ վէպիս նիւթն էր տիկին մը, որ սիրահարուած է միանգամայն ոստիկանապետի մը եւ անոր հակառակորդ ոճրագործի մը: Չորրորդ վէպիս նիւթն էր աղջիկ մը, որ խենթի պէս սիրահարուած է գողի մը տղուն: Հինգերորդ վէպիս նիւթն էր դպրոցական աղջիկ մը, որ սիրահարուած է ոստիկանի մը: Վեցերորդ վէպիս նիւթն էր մայրապետ մը, որ սիրտ տուած է արիւնկզակ աւազակի մը: Եօթներորդ վէպիս նիւթն էր քսակահատ մը, որ սիրահարուած է գաղտնի ոստիկանի մը աղջկան: Ութերորդ վէպիս նիւթն էր ոստիկանի մը աղջիկը, որ սիրահարուած է խաչագողի մը: Իններորդ վէպիս նիւթն էր ոճրագործ մը, որ սիրահարուած է իր զոհին աղջկան: Տասներորդ վէպիս նիւթն էր ոստիկանի մը շունը, որ սիրահարուած էր մարդասպանի մը շանը: Տասնըմէկերորդ վէպիս նիւթն էր գաղտնի ոստիկան մը, որ սիրահարուած է գող կնոջ մը: Տասներկուերորդ վէպիս նիւթն էր ոստիկանապետի մը կինը, որ սիրահարուած է վարդապետի մը, մաքսա-